

**V.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,  
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

2005թ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ նախագծերի շրջանակներում.

1. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն 8» պայմանագրի շրջանակում.

- տրանսպորտի վիճակագրություն,
- գների վիճակագրություն,
- ֆինանսների վիճակագրություն,
- աղքատության վիճակագրություն,

2. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ.

- 2005 թ. «ՄՈՆԵԿ» ծրագիր,

3. ՀՀ կառավարության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Աղքատության կրճատման ռազմավարության կարողությունների ստեղծման ֆինանսավորման համար TF 050823» բազմադրոնոր դրամաշնորհի միջոցների հաշվին.

- «Աղքատության մոնիթորինգ. ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջականացված հետազոտություն»,

4. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև տեխնիկական աջակցության վիճակագրական կարողությունների զարգացման համար հոլանդական TF054516 դրամաշնորհի միջոցների հաշվին.

-Վիճակագրական համակարգի ռազմավարական և ֆինանսական կառավարում,

- Կառուցվածքային վիճակագրական համակարգ,
- Բիզնես-ռեզիստրի ձևավորում,
- Ազգային հաշիվների կատարելագործում,
- Ռեզիդուալ վիճակագրական համակարգի ներդրում,
- Գների վիճակագրության կատարելագործում,
- Հրապարակումներ և տեղեկատվության տարածում:

5. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- ՕՐԿ ՄԱԿՐՈ ինթերնեյշնլ ինկ. կազմակերպության փորձագետների աջակցությամբ` «2005թ. Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտություն»,

- Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) հետ համատեղ` «Սոցիալ-տնտեսական և առողջապահության վիճակագրության կայուն հաշվետվական ընթացակարգի զարգացում». հանրության հետ կապերի

բաժնի հիմնում, մարզերի հաշվարարների ուսուցում, գրքույկի հրատարակում:

6. Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության ֆինանսավորմամբ Շվեդիայի վիճակագրական ծառայության հետ համագործակցության նախագիծ «Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում» խորագրով.

1. Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն,
2. Շրջակա միջավայրի վիճակագրություն,
3. Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր,
4. Ժամանակի օգտագործման հետազոտություն:

7. Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի շրջանակում Եվրոպական Միության և Միավորված Ազգերի զարգացման ծրագրի համաֆինանսավորմամբ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ. ՀՀ բնակչության շրջանում ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների տարածվածության և օգտագործման վերաբերյալ հետազոտություն:

2005 թ. ՀՀ ԱՎԾ մասնակցել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետևյալ զեկույցների նախապատրաստման ու մշակման աշխատանքներին.

- Մարդկային զարգացման ազգային զեկույց,
- «Հազարամյակի զարգացման նպատակների տեղայնացումը և առաջընթացը» ազգային զեկույց:

2000 թվականից սկսած, Եվրոստատը նախաձեռնել է վարել երկրների հաշվետվությունների համակարգ՝ ըստ յուրաքանչյուր երկրի: Հաշվետվությունների կազմման նպատակն է նպաստել վիճակագրության դերի բարձրացմանը նորանկախ երկրներում, ինչպես նաև արտացոլել վիճակագրական ծառայությունների կողմից ձեռք բերված արդյունքները: Չեկույցները ներկայացնում են նաև այն խոչընդոտները, որոնց հետ հարկադրված են բախվել վիճակագրական ծառայությունները, և վերջիններիս առջև ծառայած ու լուծում պահանջող հիմնախնդիրները: Չեկույցները հնարավորություն են ընձեռում նաև գնահատելու ընթացիկ իրավիճակը վիճակագրական համակարգի զարգացման բնագավառում և անհրաժեշտ են տեխնիկական աջակցության հետագա ծրագրերի մշակման հիմնավորման համար: Չեկույցները պարունակում են համագործակցության ընդհանուր գնահատականներ, ինչպես նաև հիմք են հանդիսանում նոր ֆինանսական միջոցների լոբբինգի համար:

ՀՀ ԱՎԾ-ն ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում պատրաստել է «Հայաստանի վերաբերյալ երկրի հաշվետվությունը 2004թ.» զեկույցը (անգլերեն լեզվով, 34 էջ ընդհանուր ծավալով):

2005թ. ՀՀ ԱՎԾ 42 աշխատակից 12 արտասահմանյան երկրներում (Շվեյցարիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Հորդանան, Չեխիայի Հանրապետություն, Իսպանիա, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստանի Հանրապետություն, Ավստրիա, Ճապոնիա, Ուկրաինա, Վրաստան) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով՝ միջազգային միգրացիա, ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 36-րդ նստաշրջան, ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 49-րդ նստաշրջան, աղքատության գնահատման նոր

մեթոդաբանություն, Եվրոպայի բնակչության կոմիտեի նիստ և Եվրոպայի բնակչության «Սոցիալական համակապակցվածության ժողովրդագրական խնդիրները» խորագրով կոնֆերանս, հազարամյակի զարգացման նպատակներ /տվյալներ և ցուցանիշներ/, զենդերային կտրվածքով տվյալները գյուղատնտեսությունում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար, Եվրոպայի մարդահամարների միկրոտվյալների ինտեգրացում, «ժողովրդագրական միտումներ, միգրացիան և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինտեգրացումը, ԵԱՀԿ տարածքում անվտանգության և կայուն զարգացման ապահովման խնդիրներ» խորագրով ԵԱՀԿ 13-րդ տնտեսական ֆորում, ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների ծրագիր, գյուղատնտեսական հետազոտությունների և մշակաբույսերի կանխատեսում, «Ազգային վիճակագրական արդի համակարգերի կառավարումը ժողովրդավարական հասարակություններում» խորագրով ՏԱՄԻՍ-ի բարձր մակարդակի սեմինար, պաշտոնական վիճակագրության հավաքագրումն ու վերլուծությունը Կենտրոնական Ասիայի երկրներում, հազարամյակի զարգացման նպատակներին և ԱՊՀ երկրներում առողջապահական վիճակագրական ցուցանիշներին նվիրված ԿԱՐԻՆՖՈՆԵՏ ցանց, «Չհաշվառվող աշխատանք և տնտեսություն, զենդեր, աղքատություն և հազարամյակի զարգացման նպատակներ» խորագրով գիտաժողով, գների վիճակագրություն, «ԱԵԿԿԱ երկրներում բնապահպանական ծախսերի ոլորտում հաշվառման իրականացման առաջավոր փորձի փոխանակում» խորագրով սեմինար, ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 32-րդ հերթական նիստ, սպառողական գների ինդեքս, կենսապայմանների և աղքատության գնահատման վիճակագրություն, «Անդրկովկասյան տուրիստական նախաձեռնություն» խորագրով աշխատանքային հանդիպում, «ԱՊՀ երկրների համար առողջապահական ազգային հաշիվներ, ներառյալ ՄԻԱՎ/ՉԻԱՀ ծրագիրը», Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի/ԱՊՀ և բալթյան երկրներում ՄՈՆԵԵ ծրագրի համար վիճակագրություն, Եվրոպայի բնակչության կոմիտեի հանդիպում, մարդահամարներ և կացարանների հաշվառում:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և դրանցում հրապարակվել է 10 զեկույց մոտ 113 էջ ընդհանուր ծավալով:

2005 թվականին ՀՀ ԱՎԾ 94 աշխատակից մասնակցել է ՀՀ տարածքում /Երևան, Ծաղկաձոր/ ՀՀ Առողջապահության նախարարության, «Հայաստան 2020» ծրագրի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության համակարգման բաժնի Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի օժանդակությամբ, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան» Եվրասիա հիմնադրամի ծրագրի, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության և Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության /ԴիԷֆԱյԴի/ Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՀՀ կառավարության` ի դեմս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Հայկական սոցիոլոգիական ընկերության, «Մարկեթինգի

հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խմբի, Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և ՀՀ կենտրոնական բանկի, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի /ԱՀՌԾ/, Բաց ֆորումի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՀՀ Արտաքին գործերի նախարարության, ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի շրջանակում ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի, «Առաքելություն Հայաստան» ՀԲԿ-ի, Հայաստանի համայնքների միության և ՀՀ նախագահին առընթեր տեղական ինքնակառավարման հանձնաժողովի, «Հազարամյակի մարտահրավերներ» հայաստանյան նախագծի, Ճապոնական միջազգային համագործակցության գործակալության, «Հանուն ընտանիքի և առողջության» համահայկական ասոցիացիայի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի, Հայաստանում Եվրամիության պատվիրակության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի» ծրագրի կողմից կազմակերպված թվով 61 միջոցառումների՝ /աշխատանքային հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, սեմինարներ, սեմինար-պարապմունքներ, նիստեր, աշխատաժողովներ, ուսուցման դասընթացներ, խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ, կոնֆերանսներ, ֆորումներ, մամլո կոկտեյլ/ հետևյալ թեմաներով՝ ԱյՍիԷՖ դասակարգչի ներդրում, Հայաստանում զբոսաշրջության ոլորտի ուսումնասիրության արդյունքների և հեռանկարային զարգացման ծրագիր, ԱՀՌԾ մոնիթորինգի ցուցանիշների համակարգի ներդրման հիմնախնդիրներ, «Հետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերներ» գրքույկ, Հյուսիսային Իռլանդիայի և Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարության օժանդակությամբ մշակված Գեոարքունիքի և Տավուշի մարզերի զարգացման ծրագրեր, ԵՄ/ԵՀ պատվիրակության երևանյան գրասենյակ/ՏԱՄԻՍ նախագծերի թիմերի ղեկավարների հանդիպում, Եվրոպական ինտեգրման գրադարան, գենդերի և քաղաքականությունների ծրագիր Հարավ Կովկասում, «Հայաստանյան զարգացումներ» պարբերական, ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության Եվրամիության և Եվրամիության անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի ներդրման ազգային ծրագրի թիվ 24 «Ֆինանսական վերահսկում, ֆինանսական և բյուջետային դրույթներ», Հայաստանում արտագնա աշխատանքային միգրացիային առնչվող խնդիրներ, ՏԱՄԻՍ-ի 2006թ. գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններ և Եվրոպական հարևանության քաղաքականություն, ԵՀԶ/ԵՀԳ-Գ հասարակության իրազեկում և սպասումներ, «Ներդրումները զարգացման համար» և «Ազգային սոցիալական մոնիթորինգի համակարգ», անապահովության գնահատում, աշխատանքի

միգրացիայի սոցիոլոգիական հետազոտություն, ծրագրի ցիկլի կառավարում, երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի իրագործում, «Փախստականների սոցիալական կապիտալը և զբաղվածությունը» հետազոտություն, «Հայաստանում անցումային շրջանում տեղեկատվության թափանցելիության ապահովումը» ծրագիր, Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացման ուղղություններն ու հիմնախնդիրները, մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում, «Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2006-2008թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ԳԵՎԻՆՖՈ-ն և հազարամյակի զարգացման նպատակների մոնիթորինգ, ԵՄ և ԱՊՀ երկրների միջև համագործակցություն /քննարկում Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ԵՄ և ԱՊՀ երկրների միջև համագործակցության բաժնի վարիչի տեղակալ Թոբիաս Բերգմեյերի հետ/, «Խոցելիության գնահատման հետազոտություն. մեթոդաբանական և կազմակերպական խնդիրներ», ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի վեցերորդ նիստ, «Աշխատակազմի ղեկավարի դերը Հայաստանի ժամանակակից քաղաքացիական ծառայության համակարգում», «Հազարամյակի մարտահրավերներ – Հայաստան. մոնիթորինգ և գնահատական», «Համայնքային մակարդակում սոցիալական քաղաքականության և սոցիալական գործընկերության հիմնախնդիրներ», «Ազգային ծրագրով նախատեսված գլուխների հետագա մշակման գործընթացը, մեթոդաբանությունը, աշխատանքների իրականացման կարգը», «Հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար», հազարամյակի զարգացման նպատակների տեղայնացման առաջարկների նախագիծ, «Եվրոպական ինտեգրացման գրադարան» գրքաշարի երրորդ և չորրորդ գրքեր՝ «Եվրոպական ընդհանուր օրենսդրություն» երկհատորյակ և «Եվրաինտեգրացում. ֆինանսավորում և իրագործում /Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների փորձը/» գիրք, «Ներգործության գնահատում /գնահատման մշակում, ընտրանքի մշակում, հետազոտության գործիքներ, հետազոտության իրականացում/», «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հրատարակված «Հայաստանի Հանրապետության Էկոլոգիական իրավունք» /նորմատիվ իրավական ակտերի ժողովածու/ գիրք, Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի ելքի ռազմավարության մշակում և առաքելության նախնական հաշվետվություն, գյուղական մարդկային զարգացման զեկույց 2005թ., «Սողանքային աղետի կառավարման ուսումնասիրությունը ՀՀ-ում», Ազգաբնակչության և զարգացման միջազգային կոնֆերանսի գործողությունների ծրագիր, «Եվրոպական տնտեսության հետ ինտեգրացիա և շուկայական բարեփոխումներ. գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման մարտահրավերներ», Երևանի գլխավոր հատակագծի ռազմավարական Էկոլոգիական գնահատման հաշվետվություն, տուրիզմի հատված, ՀՌԿԿ տվյալների հավաքագրման նախաձեռնության ծրագրի շրջանակում 2005թ. իրականացված հետազոտության արդյունքներ, առողջապահական համակարգի կատարողականի գնահատում, «Տրանսպորտը ԵԱՀԿ տարածքում. անվտանգ տրանսպորտային ցանցեր և տրանսպորտի զարգացումն ի նպաստ տարածաշրջանային տնտեսական համագործակցության ամրապնդման և

կայունության», «Արդյունավետ կառավարման միջազգային փորձի կիրառումն ազգային հակակոռուպցիոն միջոցառումներում», Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում ԵՄ-Հայաստան համատեղ գործողությունների ծրագիր, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման պատասխանատուներ, կենսաթոշակների համակարգի բարեփոխումները Հայաստանում, Հայաստանի բնակչության շրջանում թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի տարածվածության համահանրապետական ուսումնասիրության արդյունքների գեկույց, Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը և պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Հայաստանի մրցունակ մասնավոր հատված» /ԲԱՓՍ/ ծրագրի շրջանակում զբոսաշրջության զարգացման բաղադրիչ, հարկերի գանձման գործընթացում գործարքային ծախսերի գնահատում, զբոսաշրջիկությունը որպես գյուղական վայրերի տնտեսական զարգացման գործիք:

2005 թվականին ՀՀ ԱՎԾ է այցելել 8 հանձնախումբ, 17 փորձագետ Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, ԱՄՆ-ի ՕՐԿ ՄԱԿՐՈ ինթերնեյշնլ ինկ. կազմակերպությունից, Ղազախստանի վիճակագրական ծառայությունից, Համաշխարհային բանկից, Ղրղզստանի վիճակագրական ծառայությունից և Եվրամիության վիճակագրական ծառայությունից՝ ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում, տեխնիկական և խորհրդատվական օգնություն ցուցաբերելու, Եվրոստատի առաջարկությամբ փորձի փոխանակման նպատակով հաշմանդամների կենսապայմանների վիճակագրության, շրջակա միջավայրի վիճակագրության, գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի, ժամանակի օգտագործման հետազոտության, ժողովրդագրական և առողջության հետազոտության, աշխատանքի վիճակագրության, աղքատության գնահատման, եռամսյակային ազգային հաշիվների, տրանսպորտի վիճակագրության, գների վիճակագրության, ֆինանսների վիճակագրության, աղքատության վիճակագրության /ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն 8» պայմանագրի շրջանակում/ բնագավառներում:

Բոլոր այցելություններն արդյունավետ էին և դրական ազդեցություն գործեցին ՀՀ ԱՎԾ աշխատանքների հետագա բարելավման և զարգացման ուղղությամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.04թ. թիվ 743-Ա «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքները կազմակերպելու մասին» որոշման՝ ՀՀ ԱՎԾ աշխատակիցները մասնակցել են վերոնշյալ ծրագրի մշակման աշխատանքներին:

2005թ. ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 1 սեմինար-շնորհանդես «Ազգային վիճակագրական համակարգը Բուլղարիայի Հանրապետությունում» խորագրով /48 մասնակից/ ՀՀ և ԵՄ միջև կնքված Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրի /ԳՀՀ/ իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքների շրջանակում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը մասնակցել է Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրի համար առաջարկությունների փաթեթի մշակմանը՝ վիճակագրության մասով.

- վիճակագրական դասակարգումների (ԷյջԷս/ՄիԷն, ԱյԷսՄիՕու-88 (ՄիՕուԷմ), ԱյԷսԻԴի, ՄիՕուԱյՄիՕուՓի, ՄիՕուԷՖՕուՋի, ՄիՕուՓիԷնԱյ, ՄիՕուՓիՓի) ազգային տարբերակների մշակում և ներդրում և գործող դասակարգումների 2007թ. վերանայում,

- վիճակագրական գործառնության համակարգից /գործառնության միավորից/ ինստիտուցիոնալին /ինստիտուցիոնալ ռեսպոնդենտային միավորին/ անցման նախապատրաստում,

- գործառնության և ռեգիոնալ վարչական ռեգիստրների ձևավորում և զարգացում,

- համատարած հաշվառումներ՝

ա. գյուղատնտեսության,

բ. տնտեսական,

գ. իրական ակտիվներում ներդրումների,

դ. հիմնական միջոցների,

ե. ոչ առևտրային կազմակերպությունների,

- ԱՀՀ-93-ով նախատեսվող հաշիվների ամբողջական ներդրում և անցում ESA-95 համակարգին,

- աղքատության, զբաղվածության և չհաշվառվող տնտեսության վիճակագրական մոնիթորինգի կարողությունների զարգացում տնային տնտեսությունների հետազոտությունների ցանցի և գործիքակազմի ընդլայնման միջոցով,

- գների վիճակագրության կարողությունների զարգացում, սպառողական, արդյունաբերողների, ծառայությունների, շինարարության և այլ ոլորտների գների դիտարկման ցանցի և գործիքակազմի ընդլայնում,

- գյուղատնտեսության, շրջակա միջավայրի, առողջապահության, միգրացիայի, ներքին և արտաքին զբոսաշրջության սատելիտային հաշիվների մշակում և ներդրում,

- ծառայությունների վիճակագրություն,

- տրանսպորտի վիճակագրություն,

- աշխատանքի և կենսամակարդակի վիճակագրության հետազոտության ցանցի և գործիքակազմի ընդլայնում,

- ժողովրդագրական, սոցիալական, գենդերային վիճակագրության կարողությունների և գործիքակազմի ամրապնդում և զարգացում,

- ՀՀ ԱՎԾ տեղեկատվական տեխնոլոգիական հիմնապաշարների տեխնիկական կարողությունների ընդլայնում, վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգերի և տեխնոլոգիաների արդիականացում,

- առողջապահության էկոլոգիայի վիճակագրության մշակում և ներդրում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն ակտիվորեն մասնակցել է «ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի դրույթներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի մշակման աշխատանքներին:

Անցած ժամանակահատվածում ՀՀ ԱՎԾ կողմից տարվել են բանակցություններ Համաշխարհային բանկի, Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության, Ճապոնական միջազգային համագործակցության գործակալության հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մշակվել և ներկայացվել են համագործակցության նախագծերի առաջարկներ համապատասխանաբար ՀՀ վիճակագրական համակարգի գլոբալ գնահատման և մաստեր-պլանի, «Մոցիալական վիճակագրությունը Հայաստանում» ծրագրի /հաշմանդամների կենսապայմանների վիճակագրության, շրջակա միջավայրի վիճակագրության, գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի, ժամանակի օգտագործման հետազոտության/, տնտեսական հաշվառման, գյուղատնտեսության հաշվառման և շինարարության վիճակագրության հետազոտության վերաբերյալ:

ՀՀ ԱՎԾ միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ /թվով 954/: Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2005թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 5 հրատարակում, 1 մամլո հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 287 հարցումների:

2005թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 113 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջպետական փոխանակման շրջանակում 2005թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 196 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 42-ը՝ ամսական, 34-ը՝ եռամսյակային և 120-ը՝ տարեկան պարբերականությամբ: Ընդ որում, 167 վիճակագրական հարցաթերթեր նախատեսված է եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով և 29 հարցաթերթ՝ փոստային:

ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի որոշման համաձայն, ՀՀ ԱՎԾ կողմից 2005թ. ընթացքում ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 167 վիճակագրական հարցաթերթեր (139 էլեկտրոնային և 28 փոստային), որոնցից 31-ը՝ ամսական, 37-ը՝ եռամսյակային, 99-ը՝ տարեկան պարբերականությամբ: